



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. ՀԱՄԲՈՐՁՈՒՄԵԱՆ

ԱՐՏՎ-ԿԵՐ



ԹԻՖԼԻՍ, 1903
ԱՐԱԴ. ՏՊԱՐ. ՄՆ. ՄԱՐՑԻՐՈՍՅԱՆՑ

Օր. հայոցակը

6 NOV 2011

91.99

18-20

Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Խ.

34/Վ - 22 թթ 81/3

ԲԱՆԱՍՏԵՂՑՈՒԹԻՒՆՆԵՐ

PA

14654

ԱՐԻՒՆ-ԷԶԵՐ

Տ Ի Ֆ Լ Ի Զ

Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի

Պուշկինեան փողոց, № 12.

1903

31 MAY 2013

37559

23921-ч.3.

Ա.

Ես կուղեմ ոսկեշող արեի ցոլքի մէջ
Անհունի ջինջ ու նինջ դաշտերում գալարուել...
Կամ տուէք կատաղի փոթորիկ ինձ անվերջ,
Նորա գոռ, ահաւոր չնչի մէջ միշտ կռուել...

Օ՞, կուղեմ ես աղատ կայծակին էլ նման
Վեհութեան էջներում բոցկլտամ ու ճախրեմ...
Կամ տուէք ինձ անխօս սև ու սուզ գերեզման,
Նորա լուռ կամտչի տակ անցաւ ես վթեմ...

Կամ ոչինչ. կամ բոլորը... ժպիտ, կամ
Ոսկեշող ճառագայթ, կամ զայրոյթ մրգի,
Անհունի վեհ դաշտեր, կամ մըուր գերեզման,
Կամ վշտիշտով-հեղեղ, կամ երազ ցնորդի...

Օ՞, տուէք ինձի լոյս կամ կոիւ անդադար,
Կամ անխօս գերեզման, մոռցման սև կամար...



3810-48

1210-98

Дозв. цензурою. Тифлисъ, 7 августа, 1903 г.



Բ.

Ե՞յ գիտի գարնան ոսկեշող օրեր,
Եկաք, շոյեցիք երազի նման.
Մատաղ աենչ-յոյսեր, ցնոր-անուլչներ,
Եկաք ու անցաք անյետ, անդիւման...

Որպէս վաղորդեան ժպտուն արշալոյս,
Գգում էիք ինձ անուըջոտ թեռվ,
Զեր վառ երազոտ շնչի տակ տենչ յոյս
Ես անում էի սրտումս անխոռվ...

Ես օտար կեանքին, ես դէպի նորան
Նայում էի միշտ հաւատով անբիծ...
Եւ ահեղ կեանքի աղօտ հեռաստան
Թւում էր ինձի քաղցր, բերկրալից...

Է՞յ գիտի գարնան ոսկեշող օրեր
Եկաք, շոյեցիք երազի նման...
Եւ կեանքս ջիւան ինչ ունէր-չունէր,
Սուաք ու անցաք անյետ, անդիւման...

Դ.

Թող տրտունջ, եղբայր, լուծդ տար անձայն.
Այդպէս է ամեն մի մարդու վիճակ.
Ասա, մեղանից ով չի համաձայն,
Որ կեանքն է ցաւի, վշտի ծով անտակ...

Ով որ ապրել է, կեանքում մտածել,
Եւ ով եղել է հարկատու բախտախն,
Ով գիտէ ըզգալ, ըզգալ ու դիտել,
Նա վիշտ կունենայ իր սրտի մէջին...



գ.

Սկ' -սկ' ամպեր եկան թափուան
Սար ու ձոր.

Սկ' -սկ' դարդից եկան լցուան
Սրտիս խոր.

Են մեծ սարը ամպերու մէջ կը սպայ,
Ա՛լս, իմ սիրալ դարդերու մէջ կը տքայ...
Զան, քամի ջան, առ ամպերը, քչէ տար,
Զան, հոգի ջան, առ դարտերս ցրուէ տար...
Դուրս եկ արե, դուրս եկ շուտով, փէլփլա,
Սարի սմբուլ, սարի դօշին ալվլա...
Դուրս եկ ջէլրան, դուրս եկ տանից
Քեղ տեսնամ...
Երուած սրտիս դառը կսկիծ
Մոռանամ...



6

Ե.

Հպարտ ու ազատ... ճակատդ բարձրէն,
Որպէս զօրագոյն, աժդշնայ իգիթ,
Էս կեանքը ճնշող խաւարի ծացէն
Սնվախ ու արի առաջ տար ուղիդ:

Հայեացքդ կանթեղ, անունդ անբիծ,
Ճեռու քեզանից դարշ ստրկութիւն...
Կոշման բարձրութեան վեհութեան դաշակից
Ծաղրիր ժանտ բախտի մրուր-դառնութիւն...

Դօստի դուշմանի առաջ պարզերես,
Գէշ-դարշ աշխարհի նամարդ գաւակին,
Ինչ էլ որ լինի, աղքան էլ լինես,
Դու գլուխ չ'տաս, չը տաս բնաւին...

7

Առաջ, դէպի մարտ, հպարտ, անվեհեր,
ու կուրծքդ երկաթ, ու սիրտդ ժէռ քար,
զէկ շանթի նման բախտի սլաքներ
Թող գան ու զարնեն կրծքիդ չարաշար...

Ովկիանի ափին վիթխարի կանգնած
Սկ՝-դկ՝ ժայռի պէս անյաղթ կ'մնաս...
Ալեաց պէս, կեանքի վշտելն ու հարուած
Կը գան, կը փարուեն կրծքիդ անինաս...

Զ.

Ծնունդ անհունի, եղբայր շէկ շանթին,
Հոգիս հոծ կայծակ ու սիրտս արիւն,
Ու ես հոգու պէս, ու ես ոգու պէս
Կեանքի ոլորտում շըջում եմ անքուն...

Տիեզերքն անկոպար, եթերը անափ
Մտքիս խորչերում—հոգուս մէջ պարտակ,
Սուրբ սէր եմ աենշում անյագ ու անհաս,
Տենչանքս հղօր, թերս խորտակ...



Երբ լուս գիշերին երկինքն ասաղաւուն
Անհուն լոռութեան ողի է ցոյում,
Հզգում է հոգիս սուրբ սէրը անհաս
Ճնոր լոռութեան երազ էջերում...



Առաւօտ զով ու հով ժամերին,
Երբ աղօտ, կիսալոյս է աշխարհ,
Երբ խաղաղ է և ջինջ լալ երկին,
Ու կոչում են աստղերը իրար,
Երբ ծովակը կէսքուն, կէսարթուն
Վեր-երկինք է յառած, լուս նայում,
Երբ մժոտ հեռաստանը անհուն
Խոր քնից նոր զարթել է ուղում,
Երբ դովիկ զեփիւսի թեփ տակ
Սգաւոր սօսափում է անտառ,
Եւ երբ նոր է ծագում կապուտակ
Լեռներից արշալոյն վառ ի վառ,
Զուտ վերկաց, եղբայր իմ տանջանար,
Այդ վսեմ, անժխոր դու ժամին
Բարձրացիր ստուերոտ սարալանչ,
Ու հանգիստ կը գտնէ քո հոգին:



Ես մեն մենաւոր վաղորդեան ժամին,
Մրտում ժէռ քար,
Մտայ ծաղկաբոյր ցօղապատ այգին
Կանաչ ու դալար:
Մահում էր հովիկ զեփիւռը թախծոտ,
Մահում, օրօրում ալ-բալ ու կանաչ.
Հեռում էր կաղնին, սօսաւում վշտոտ.
Կիսարթուն երկրից լսվում էր հառաչ...
Ես տեսայ ինչպէս կամացուկ շուշան
Ջողոտ աստղերին կարօտ էր զրկում,
Եւ ջերմ արցունքի շիթով աննման
Ալ-վարդ թփերն էր ցոյում, արծաթում...



Թ.

Տուր ձեռդ եղրայր, ծով վիշտը կեանքի
Թող մեզի տանջէ, հարուածէ մի տեղ...
Սիրա սրախ սեղմենք... դժոխք օրերի
Խաւարից նայենք դէպ հեռոչ—այնտեղ...

Այնտեղ, ուր կեանքի ժխորն է նիրհում
Մոռացման երազ կամարի տակին,
Զինջ-նինջ լոռիթեան շուրջը անտրառում
Ցոյում է, շոյում յօգնատանջ հոգին:

Ա՛խ, այնտեղ, այնտեղ... դէպի ուր սրտից
Անուրջն է անցնում կայծակի նման.
Խանդավառ զարնան դաշտերն անկակիծ
Փռուած են այնտեղ աղատ, անսահման...

Մեր յոյսն էլ այնտեղ, մեր սէրն էլ այնտեղ
Մոռացման ցնոր, անհ ւն էջերում...
Տուր ձեռդ եղբայր, նայենք միատեղ
Հեռուն—դէպի սուրբ գարունն անտրառում...



Ժ.

Ես կը սիրեմ ջիւան-կեանքի
Արնուա դաշտել,
Ես կը սիրեմ կայծոտ ջանքի
Մարած կոյտեր:
Ես կը սիրեմ յամառ մաքի
Համար դոհուիլ,
Ես կը սիրեմ հոծ-պատրանքի
Տագնաալ տեսնել...
Ես կը սիրեմ բոց-տենջանքի
Ճիրիմ շոյել,
Ես կը սիրեմ սէր-գդուանքի
Մոխիր ցոյել...
Ես կը սիրեմ հուր-կայծակի
Բոցը ծորել,
Ես կը սիրեմ դառ արցոնքի
Ծով հեղեղել...
Ես կը սիրեմ գոռ-մըրկի
Զայրոյթ ծծել,
Ես կը սիրեմ սկ-դկ վշտից
Մարեր նիւթել...

Խաւար ու տագնապ,

Դժոխք ու կայծակ,

Վշտածին կամար, լաց-կոծ, հեծեծանք,

Ճանթող բոց-կըակ,

Դաշոյն սըի պէս

Խոռքեր գժնդակ,—

Ահա իմ փափագ, ահա իմ պապակ...

ԺԱ.

Ուղորդ եմ, զարիր փուշ-փուչ էս կեանքում,
Քղձերս խորտակ յոյսերս կործան.

Ընկած չոլէշոլ մենակ, էրերում

Մի խորշ եմ պտուռմ վերջին հանգստեան...

Ա՛խ, ջիւան կեանքիս անուրջոտ յոյսեր
Դարուն օքերիս վառ վայլը տարաք...
Ճրջում եմ վհապ, անյոյս ու անսէր,
Տենչում սկ գարուն անցաւ հողի տակ...



Սկ՝ ցաւ աշխարհի նամարդ զաւակներ,
Նամարդ ընկերներ ախ ինձի մոսցան...
Եմ կեանքը թափառ, անտէր, անընկեր,
Քղձերս խորտակ, յոյսերս կործան...



Ճ.Բ.

Ես կը սիրեմ անհուն տանջանք
Որ տագնապն է տենչ ու յոյսի,
Եւ կոծ-հառաշ, արնոտ պատրանք,
Որ կովումն է մութ և լոյսի:

Ես կը սիրեմ արիւն ամպեր
Վշտից հիսուած կրծքի խորշում,
Եւ արցունքի սե՛-դև ժայռեր
Ցցուած սրաի լուռ խորանում...

Ես կը սիրեմ միշտ մեն-մենակ
Ծով վշտերին ականջ դնել,
Զինջ օրօրով մահու կոշնակ
Լուռ գիշերին հեռուէն լսել...



Ճ.Գ.

Դաշտային զառ-զառը արք, ժպտագեղ ծաղիկներ
Զեղի պէս շողշողալ չեմ ուզում...
Քաղցրախօս իմ բլբուլ, հով ու զով զեփիւռներ
Յոզնած սիրաս երգեր չի տենչում...

Զեմ ուզում քեղի պէս, անտարբեր արեգակ,
Կամ նիբհել, կամ անհոգ արթնանալ.
Դալկածոր, մշտալուռ, սգաւոր լուսինեակ,
Քեղի պէս չիմ ուզում լուռ մնալ...

Խեղճ իմ ազգ, քեղնման ես կուղեմ տանջահար
Լալ-խոկալ, ծով արցունք հեղեղել...
Մե բախտին հարկատու տրորուած իմ եղբայր
Քեղ համար ես կուղեմ արտասուել...



ԺԵ.

ԺԴ.

Ես դժոխք կարդացի իմ երազ օրերին,
Այն անմիտ խոհերին, յոյսերին այն ցնոր,
Որ ունայն իմ կեանքի ոսկեշող, գեռ չէմքին
Ինձ դիւթում էին միշտ, կախարդում անսովոր...

Ես յոյսեր շեմ ուզում, որոնք միշտ անկատար,
Մժի պէս, սաւառնին կսկծոտ կրծքիս տակ...
Ես ըմպել եմ սե-կեանքը թոյնոտ վշտահար,
Ես գիտեմ, ինչ ասել է յոյսեր ու տենչանք...



Դու փորձել ես անքուն գիշերներ,
Խորակուած սկ՝ սրտի հեկեկում,
Եւ հոգու տառապանք ու վշտեր,
Սրամալ մութ բանտի անկիւնում...
Դու գիտե՞ս, ինչ ասել է տենչալ,
Ու ցնոր անուրջներ փայփայել,
Եւ խեղգող կապանքումը մնալ,
Գերութ եան սուգ մըուրը ծծել...

Ես աեսել եմ, գիտեմ այդ բոլոր,
Նորահաս և մատազ իմ սրտին
Մի նեղ բանտ է եղել սեաւոր
Ջահամոլ, վուշ աշխարհը այս սին...
Ես յոյսով միշտ թռել եմ հեռուն,
Անուրջել եմ ես միշտ, անսահման,
Յանկացել եմ ես միշտ և անհուն
Այժմ յոկնել եմ, հասել թուլութեան...



Ժ. Գ.

Գնում են ալիք, գալիս են ալիք
Մէկմէկուց յուժկու, մէկմէկուց հզօր,
Նետվում են ժայռին, զարկում են ժայռին,
Կովում են յաւէտ, նրանք չունին անդորր...

Փրփուրը բերնին աղմկում է ծով,
Ալեղարդ գանգուր թափթ փում դէս-դէն.
Պայթում է մլրիկ, սուլում է քամին
Տարելք բնութեան պոկում իրաբէն:

Կոիւ է կեանքում, կոիւ հանապաղ,
Կովումն են սնվում միտքս ու զաղափար,
Կովումն է ծնունդ, կովումն է վախճան,
Այդ է բնութեան օրէնքն անաշառ...



Ժ. Ե.

Յնոր երաղներ, անուբջոտ խոհեր
Անցեալի մժից ենում են կրկին,
Եւ խիտ խմբովին, որպէս կարապներ
Տանում են ինձի իրանց թևերին...

Անհեթեթ ըղձեր, խոհ-յոյս ու տհնչանք
Անփորձ և ունայն հաւատ անկայուն,
Ոոկեշող առուրց միամիտ բերկրանք
Կորել էք անյետ, դարձել էք աճիւն...

Կանգնած եմ ահա ժայռերի միջե
Ուր ջինջ երեկոն նայում է գաղտուկ...
Յուշիկ լսվում է լերան սուզն ու հե,
Սկանչ է դնում լուսնիակը անձուկ...

Մենակ եմ, հեռու կեանքի ափերից,
Յոզնած է հոգիս... Աշխարհը մոռնամ,
Անտառի գլխով, ամպերի փէշից,
Իմ կեանքը ջիւան ողբա՛մ ու երթա՛մ...

ԺՂ.

Հեռուէն եկաւ մըժ-դուման,
Եկաւ լցուաւ սար ու ձոր.
Յոյսերս անցան... Էլ դարման
Զը կայ սըտիս վիրաւոր...



Առուն կուգայ էն սարէն
Դարդ ու ցաւոտ երգ կասէ.
Ջիւան կեանքիս ողբ ու սուգ
Տիսուը երգում կը լսուէ...

Հողմի թեին, մըժ-ամպից
Մի ձէն հասաւ ականջիս...
Կեանքն է երազ—մըմնջաց
Դարայ խաբար սև կեանքիս...



Ականջ դիր մէրիկ, սպոր էս սրտի
Ահեղ փոթորկին, կածակ-որոտին...
Եւ ո՞քան սև է ջիւան իմ կեանքի
Թխալու հեռաստանն արնոտ ու մթին...

ՃԹ.

Մէրիկ, իմ մէրիկ, տես հիւանդ եմ ես,
Կուրծքս վիրաւոր, հոգիս ուժասպաս,
Երգում եմ երգեր արնոտ սուկ սրտէս,
Քղձերս կորած, կեանքս սկալաբ...

Է՞հ, կերթամ մէրիկ, կերթամ շատ հեռուն,
Աշխարհն էլ թողնեմ ու կեանքս ողբամ...
Երազ մոռացման կամարը անհուն
Կանչում է հեռուէն... ախ, երթ ամ, երթամ...

Լաց մի լինիր դու անուշիկ մէրիկ ջան,
Քեղնից կ'հեռանայ քո աղիզ բալէն...
Լաց մի լինիր դու... ախ, կեանքս է ջիւան...
Թողնեմ հեռանամ սև ցաւ աշխարհէն...

Ա՛խ, ուր են կորել ջիւան իմ կեանքի
Սիրառատ էջեր... չը կան, էլ չը կան...
Ո՞ւր են, մէրիկ ջան, իմ սէր տենչանքի
Երազ ցնորքներ—նոցա գերեզման...



Կորել են, կորել անյետ, անդիւման...
Ու սէր, ու տենչանք թափուել են, թօշնել
Աշնան թառամած թփերի նման,
Ու ես եմ միայն ու սև իմ վշտեր...

Դէպի ձեզ հարազատ եղբայրներ,
Չարչարուող փուշ-կեանքի լծի տակ,
Դէպի ձեզ եմ գալիս խոհ գաշտեր
Վեհ անտառ ու գարնան արեգակ...
Օ՛, ձեզ մօտ է ազատ ու անդորր,
Ուր բուրում են ալ-վարդ ու ալբալ,
Ուր փայլուն ժաղիկներ ժամածոր,
Եւ ժփում են արտեր վառ ի վառ...
Օ՛, այդտեղ, ստուերում թփերի,
Ուր երգում է սոխակն աննման,
Ուր թափփում է նուագ զեփիւրի,
Գեղ-բուրում վարդենին ու շուշան,
Հով ու զով է, հանգիստ ու գատար...
Զան աղբիւր, միշտ նստեմ քեզ լսեմ,
Հմայիչ է մեղյուշ քո քնար,
Ու անվերջ քեզի հետ արտասուեմ...



Կուղէի ոյժ լինել,
Եւ նման կայծակի
Վառվուել, գալարուել
Եւ թափով շեշտակի
Մեծ եթերը պատաել
Եւ հասնել վեհապանծ
Այն գահին երկնքի
Ուր բազմած է Աստուած
Եւ ցաւին սե-կեանքի՝
Կաշկանդող մարդկութեան,
Անդ լինել համարձակ
Յայտաբար ու թարգման...



Օրուայ ծանր հոգսերը կրծքիս,
Վշտաշատ, թուլացած էր հոգիս,
Երբ հաղիւ մոռացուած քուն մտայ
Ու ցնոր երազում քեղ տեսայ...

Սիրաշատ քո դէմքով մօտեցար
Ակսեցիր վշտերն իմ ամոքել,
Ջոյեցիր կուրծքը իմ ցաւազար,
Դրդեցիր ինձ յուսալ ու ձկտել...

Եւ այն սուրբ երազում, հոգուս քոյր,
Անուրջոտ մեր սիրոյն ի նշան
Մենք առանք իրարից մի համբոյր...
Ա՛յս, ինչո՞ւ այն վայրկեան էր միայն...



Ես շատ վաղ գուլս եկայ մանկական հասակից,
Ես շատ շտտ դիմեցի դէպի վիր, դէպ առաջ.
Վաղաժամ ծաղկեցին տենչ պատպակ յուսալից,
Ջուտ գերուեց անուրջով իմ հոգին նորաբաց:

Գեռ մանուկ օրերին երազում էի ես
Այն շողոտ աստղերում իմ վառ աստղը տեսնել...
Դեռ մատաղ օրերին կեանքը սուրբ լոյսի պէս
Ինձ կանչում էր առաջ դէպի յոյս, դէպի սէր...

Եւ ուխտում էի ես անուրջոտ երազում
Կեանքի մէջ իմ բախտի վարդ երեսը տեսնել.
Եւ ուխտում էի ես, իմ եզրօք հեկեկում
Ու հառաշն անկաշառ իմ խօսքով սփոփել...

Եւ անփորձ ու անմիտ ես առաջ մղուեցի
Կեանքի կոյը սրամաշուկ անողոք կոռուի մէջ.
Ու տենչանք-յոյսերիս ես թևերն այրեցի
Աշխարհի վշտառատ հրդեհումը անշէջ...

ի՞.

Եւ մարեց հոգուս մէջ այն կրակը շողոտ,
Որ կոռուել էր դրդում ինձ յանուն մարդկու-
թեան...
Ջուտ յոգնեց աշխարհում մատադ կուրծքս տեն-
չոտ,
Աւադ թոյլ եմ հիմայ, թոյլ, անդօր անսահման...

Աշերումս թէև քարացած է արցունք
Անկործան ժայռի պէս,
Սե-կեանքի խաւարից մոնչում են ցուրտ, բուք.
Վշաի ծով փրփրադէզ,
Եւ թէկուղ կայծակներ ու որոտ մէջ ընդ մէջ
Բանկվում են զլսիս,
Բայց կրկին հաւատալ եմ ուզում ես անվերջ
Վառ աստղին իմ ազգիս...



Եւ թէպէտ դեռ հեռու են գալուստը գարնան
Ողջունող թռչուններ.
Ու լսվում են անդուլ լաց ու կոծ ու դաժան
Սև բախտի հարուածներ,
Եւ պարծանք համարուող դաշտերից սրտագին
Կարկաշում է արիւն,
Բայց դարձեալ իմ ազգի մշտավառ սուրբ աստղին
Հաւատում եմ անհուն...

Եւ ինչո՞ւմն է իմ վիշտը. սարեր մժապատ
 Այդ շասէք, ես զիտեմ
 Հայրենիքս է անտէր ու եղբայրս է հիւանդ,
 Ես անդօր՝ պիտ լուիմ...
 Եւ որպէս փոթորկից հալածուած մի թռչուն
 Միշտ անտուն ու անտէր.
 Փուչ բախտի լծի տակ պիտ երգեմ ես անհուն
 Սկաւոր իմ երգեր...

Կը տիրէ իջնելով այն լազուր երկնքից...
 Ես գնով իմ կեանքի
 Հաւատում եմ անկեղծ երևող մշուշից
 Վառ աստղին իմ ազգի...

Յըջապատս դժոխք, վիշտ-հեղեղ փրփրալից,
 Աչքիս դէմ գերութիւն.
 Ես ուզում եմ երգով խորտակել վշտալից
 Այս կամաքը դժդոյն...
 Արցունքի ժայռի վրայ ինձ համար չորացած
 Իմ յոյսին հակառակ,
 Եւ տենչում եմ հոգով դէպի լոյս, դէպ' առաջ:
 Դէպի սուրբ արեգակ...



Ես գնով տանջանքի հաւատալ եմ ուզում
 Ճշմարտին ու լոյսին-
 Հաւատում եմ անկեղծ, որ մի օր այս կեանքում
 Սուրբ սիրոյ վեհ հոգին

ԻԵ.

Փափագում ես հանդիսատ դու գանել մունջ-
յաւէտ,
Անտրում սուրբ հանդիսատ սկը մահուան լուռ
դրկում.
Ես յոդնած եմ թէկուզ, բայց, ընկեր, բեղի հետ
Այսքան վաղ աշխարհից անջատուել չեմ ուզում...

0՝, երբէք. սուզ-մահից չեմ սարսում ես իսպառ,
Ոչ, մի այլ թախիծով է լցուած իմ հոգին.
Արթնանում են իմ մէջ անուրջներ սսկէվառ,
Քեզ յիշում եմ, սիրում հայրենիք սրտագին...
Եւ թէկուզ հէնց մատաղ օրերից ես անաէր
Երերուն ու անտուն եմ եղել կեանքի մէջ,
Թէկ վաղ եմ զըկուել ես մօրից թանկագին.
Թէկուզ թոյն, սուզ-մրտը եմ ծծել ես անվերջ,
Եւ սակայն ես յաւէտ
Աշխարհից անջատուել չեմ կարող քեղի հետ...,

Դաւոն արցունքը թէկ անկործան ժայռի
պէս

Քարացած է կրծքիս խորանում վշտալից.
Եւ կեանքի վշտի ծովը ահեղ, փրփրաղէզ
Տենչ-ըղձել հանգցըել, ու խլել է ինձնից,
Բայց բախտին հակառակ, դէմ առ դէմ տան-
ջանաց,
Ես ապլել եմ ուզում, կոռի մէջ միշտ ապլել,
Ու ձեռիս դրօշակ, հայրենիք իմ ճնշուած,
Ես կուղեմ ծաղկաղքեստ քո գարունը տեսնել...
2Է, ընկեր, չեմ կարող
Մուանալ հայրենիք ու արև ոսկեշող...

Թող գլխիս գալարուին կայծակներ, շէկ-
շանթեր,

Թող հողմեր չալաշունչ ու դժգոյն մոնչան...
Կեանք կորի ու արև եմ ուզում անվեհեր,
Կըսպասեմ ես աղատ սուրբ գարնան գալստեան...
2Է, ընկեր սրտալից
Անջատուել շեմ ուզում ես կորիւ-աշխարհից...



ի՞Զ.

(Նմանողութիւն)

Ա՞լս, կեանքս թօշնեց, ըդձերս կորան,
Տենչանքը սիրուս, երադ անուբջներ
Հեռացան աշնան հաւքերի նման,
Եւ մեն-միայն ենք ես ու իմ վշտեր...

Գարնան ու լոյսի ցոյեր ու ցոլքեր
Կեանքի ափերից քրքիջով կուգան...
Ու ինձ օտար են խնդութեան ձայներ,
Մարած է սիրտս մոխիրի նման...

Սկ՝-սկ՝ մժի պէս հողմերի թկին
Աշխարհը մոռցած, թողնեմ ու երթամ...
Ճաւերս յանձնեմ սե-ցաւ աշխարհին,
Իմ կեանքն ու սէրը ողբամ ու երթամ...



ի՞է.


(Թարգմ.)

Մանիշակը կէսքսն
Ու շուշանը յոգնած.
Ալ-վարդի հետ սիրուն
Ծարաւով պապակած՝

Սկաթոյր ամպերին
Սղերսում են ցոյել
Ջերմակէղ զաշտերին
Արծոթ-ցօղ ու ստուել...

Հմայիշ-անվրդով
Ու գանգուր-ձիւնափթիթ
Մժ-ամպերը զով-հով
Կենսուրախ-խստասիրտ,

Լալու ջինջ լաղութից
Հուռ ճամբայ են գնում...
Ու երկրին վշտալից
Մօտենալ չեն ուղում...



ԽԸ.

Սիրտ իմ վշտակոծ, գարուն է եկել,
Բացուել բուրում են ալ-բալ ու ալ-վարդ.
Ժպիտ-ոսկեզօծ շողում են արտեր,
Կանաչ է հագել հովիտ ծաղկազարդ...

Սարէն ու ձորէն արծաթ վտակներ
Ցնձուղ շիթելով վախչում են հեռուն.
Զուլալ աղբիւրի զլգլան ջրեր
Համբոյր կարկաչով երգում են գարուն..

Խումբ-խումբ ու ծիւ-ծիւ էն ցուրտ աշխարհէն
Գալիս են ահա հաւքերը մեղ մօտ,
Զեղ հազար էրնէկ, հաւքեր սիրալից,
Աղատ էք, չունէք ցաւեր ու կարօտ...

Սիրտ իմ վշտակոծ, գարուն է եկել,
Ալ-վարդն է ծաղկել, շողում բուրաւէտ...
Թողնեմ սուզ-աշխարհ, մոռնամ սե՛ հոգսեր,
Հնկնեմ սար ու ձոր, շըջեմ ես յաւէտ...

իթ.

Երգի ՏԵՆՉՐ ՄԱՐԵԺ է ԻՄ ՄԵԶ...



Երգի տենչը մարած է իմ մէջ....
Ոչ անեզը ծովի ջինջ-կապոյտ հեռաստան,
Ոչ աղմուկը ալեաց ցոյ-ցնձուղ շլթային,
Որ երազ անուղջում է ժամին երեկոյեան,—
Չեն դիւթում, կախարդում քնարն իմ ողբագին...
Երգը չէ կրակ-ցաւը սրտիս,
Օ, քնար արիւննատ,
Այլ ցաւով է խանճկում վիշտ հոգիս,
Նա կոռուի է կարօտ...

* * *

Երգի տենչը մարած է իմ մէջ....
Ոչ անափ, անկոպար լազուրի խորութիւն,

Ոչ ցնոր երազում ընկղմուած յիշ ու ցան
 Այն աստղերը շողոտ եթերի, որ անհուն
 Լոռոթեամբ կերպններ են մահուան,
 Չեն դիւթում գրաւում իմ քնար...
 Այս վհատ օրերին
 Այլ վշտեր են մաշում ցաւագար
 Ու յափնած իմ հոգին...

* * *

Երգի տենչը մարած է իմ մէջ.....
 Ոչ մատաղ արշալոյսը ժալիտ-գեղադէմ,
 Որ վառ-վառ հրդեհում է աշխարհը կէսքուն,
 Ոչ սպառ անտառի խոր մրմոնիջը վսեմ,
 Որ սօսաւ-կոհակով տարածւում է հեռուն,
 Չեն կոշում, կախարդում իմ քնար...
 Այս դժոխք օրերին
 Այլ ցաւով է սգում տանջահար
 Վշտակոծ իմ հոգին...

* * *

Երգի տենչը մարած է իմ մէջ.....
 Ջշ... աղմուկ է լսվում. այդ հառաչն է, կոկիծ

Վշտայոյդ իմ եղբօր՝ սկ-բանտի անկիւնում.
 Այդ կարկաչն է արեան որ կեանքի ափերից
 Քըրիջավ գէպ՝ հեռուն, դէպի ծովն է սահում...
 Ի՞նչ կանէ ունայն երգը այսօր...
 Պիտ անդուլ մաքառել.
 Հարկաւոր է արցունք արնածոր,
 Որ ծով-վիշտը ծծել...



Լ.

Մայիսն եկաւ հով արեց,
Երուած սըտիս դով արեց.
Դաշտ ու հովիտ զառ հազած,
Հայիբ-չիման մեղ բերեց...

Բարով մայիս, ալ-մայիս
Դարման արիք սուգ-սըտիս
Քեզնէ ուղած էն շուշան
Եարանք բերիք իմ եարիս...

Նախշուն մայիս, ջան մայիս,
Կաց, իմ գարտից խաբար տամ...
Սէր տուր, լոյս տուր սև սըտիս
Զիւան կեանքից վարամ տամ...



44

ԱԱ.

Ազբիւրի մօտ քուն մտայ,
Փէրին եկաւ, ջան առայ.
Ալ-վարդ, ալ-զարդ ծաղիկներ
Նստանք մի-անդ ես ու նա...

Ազբիւրի ջուր, անոյշ ջուր
Հով-գլուխն կը վազնէր...
Վարդին թառած գեղ-բլուզ
Անոյշ-անոյշ երգ կասէր...

Հովիկ-զովիկ կը փչէր,
Նա բլուզին դամ կուտար.
Եարիս մազիք աբրեշում
Ասես տաղլի ժաժ կուտար...

45



«Ազգային գրադարան»



NL0336807

2009/

May 2009

9h00m k 15 4.

37559

891.99
1 - 20